

ՄԿԱՐ Կ. ՂԱՐԻՔՅԱՆԻ ՀԱՅ ԲԱՐԲԱՆՆԵՐԻ ՀԵՅՈՒՆԱԲԱՆՍԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԻ ԲԱՆԻ ՍՈՒՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՄՄԻՆ

Ստալեն Սահակյան
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Արարատ Ղարիբյանը Հայստանի է որպես Հայադես-Լեզվաբան: 1937 թվականին Հրատարակած «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» մենագրության մեջ ընդհանուր դեբյուտ բնութագրել է պարբեր, միջին Հայերենը, աշխարհաբարը (երկու տարբերակով) և բարբառները: Այնուհետև, հետևելով Հ. Աճառյանի բարբառագիտական սկզբունքներին, Հանդամանորեն ընտրության է առել «Ս» ճյուղի բարբառները և Հայանաբերել տարածական նոր միավորներ, իսկ հետագա տարիներին սովել է մոտ 15, այդ թվում «Հա», «Կա» ճյուղերի նորահայտ բարբառների նկարագիրը:

Ա. Ղարիբյանի հետազոտական աշխատանքներն ամփոփված են «Հայերենի բարբառների մի նոր ճյուղ» (1939), «Համարդասություն Հայ բարբառագիտության» (1941), «Հայ բարբառագիտություն» (1953), «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ» (1958) մենագրություններում (1969):

Հիշատակության են արժանի նրա բարձրացրած Հարցադրումները միութենական մամուլի էջերում: Ու թեև նրա բերած ապացույցները որոշ առումով միակողմանի էին, որոնք էլ առիթ ծառայեցին լեզվաբանական նոր բանավեճերի Համար, այնուամենայնիվ այդ Հարցի ըննարկմանը մասնակցած Հայ, ռուս և եվրոպացի լեզվաբանները Հանդամանորեն ընտրության առան Հայ բարբառների բաղաձայնական Համակարգի յուրահատկությունները և նոր մեկնություններով լուսաբանեցին պատմահամեմատական լեզվաբանության որոշ կնճռոտ Հարցեր:

Այլ Հարց է, սակայն, որ Ա. Ղարիբյանը 1930-1950-կան թվականների սկզբ. Ն. Մառի լեզվի «նոր ուսմունքի» ուղղամիտ հետևորդն էր, ապա 1950-ին Հակվեց դեպի, այսպես կոչված, ստալինյան լեզվաբանության երկու դեպքում էլ ընկնելով ծայրահեղությունների մեջ թույլ սաղով տեսական և պատմագիտական բնույթի սխալներ ու վրիպումներ:

Հայ բարբառների հայտնաբերման դասակարգումն այսօր պահպանել է Գր Հիմնական սկզբունքները, որոնք առաջադրել էին Ա. Ղարիբյանը և է. Սիլայանը և, առանց այդ որոշակի չափանիշների կիրառման ուղ-

ղակի անհնար է սաղ բարբառային որևէ միավորի ամբողջական նկարագիրը:

Հարցն այն է, որ վերջին երկու տասնամյակում ստեղծել է մի ընդհանուր սխաղ պատկերացում կարված Հայ բարբառների բաղաձայնական վիճակագրական դասակարգման սկզբունքի ընդգրկման, բարբառային Հատկանիշների բնութագրման, հետևապես նաև բարբառային միավորների տարբերակման և տվանդական («Ու», «Կը», «Էը», «Ս», «Վիս» ճյուղերի) դասակարգումների միջև Հակադրություններ Հայանաբերելու կամ մեկնումեկին դերադասություն սաղու Հարցերում, մանավանդ որ աղա. Գ. Ջահուկյանը ընդառաջել է միահատկանիշ դասակարգումը վերահանելով նրանում սեղ գտած թերություններն ու սխալները, սակայն այդ ամենով հանդերձ ոչ թե մեղծվել այլ ճշտվել ու լրացվել են Հայ բարբառների հայտնական, քերականական և բառային Հատկանիշներով դասակարգման սկզբունքները:

Աղա. Ա. Ղարիբյանի հայտնաբանական այս սկզբունքը արդի Հայ լեզվաբանության մեջ նեղ առումով Հասկացվում է բաղաձայնական Համակարգի, Հատկապես սլավական և կիսաշվական բաղաձայնների ձայնեղ ու խուղ տեսակների մոտիվություններից բխող դասակարգում, որ Հայ բարբառների Համաժամանակյա ընտրության Համար ունի բանաձևման արժեք և դրանով իսկ կարևոր դեր է խաղացել Հայ բարբառների գիտական նկարագիրը սաղու և բուհական դասընթացի կաղմակերպման ուղղությամբ: Եվ իրոք, սկսած 1950-ական թվականներից բարբառագիտական մենագրություններում լայնորեն կիրառվել է Ա. Ղարիբյանի հայտնաբանական դասակարգումը, որ, ինչպես ասացինք, Հենվել է ինչպես Հ. Աճառյանի առաջադրած Հատկանշումների, այդպես էլ Ղարիբյանի տարիների ուսումնասիրություններից ստացված արդյունքների Հիման վրա:

Ա. Ղարիբյանը պատմահայտնաբանական սկզբունքով տարբերում է՝ ա) առաջին տեղադրության էնթալիզմ (ձայնեղ բաղաձայնների դիմաց խուլելի՝ ք, գ, դ, ձ, ք > ս, կ, տ, ծ, ճ), բ) երկրորդ տեղադրության էնթալիզմ (ձայնեղների դիմաց շնչեղ ձայնեղներ և խուլների դիմաց ձայնեղներ՝ ք, գ, դ, ձ, ք > ք', գ', դ', ձ' և ս, կ, տ, ծ, ճ > ք, գ, դ, ձ, ք), գ) տեղադրության էնթալիզմ (ձայնեղների դիմաց խուլներ և խուլների դիմաց ձայնեղներ՝ ք, գ, դ, ձ, ք > ս, կ, տ, ծ, ճ), դ) անմիջական-դրադասական (լուս բառակցի վերջի):

Գ. Ջահուկյանը ընդունում է բարբառների ստատիկ-հայտնաբանական դասակարգումը՝ դանդաղել որ այն կարելի է ճշգրտել ու լրացնել բայց և չի ընդունում Ա. Ղարիբյանի այն մոտեցումները, որոնք փորձում

են «արդի բարբառների բաղաձայնական համակարգը անմիջապես կու-
պել հսկելիության վիճակի հետ և դրա հիման վրա ցույց տալ բարբառ-
ների առաջացման պատմական հաջորդականությունը»:

Ա. Ղարիբյանը այդ մոտեցմամբ էլ բարբառային տարբերությունների
առաջացման համար սահմանել է իր **4 փուլերի տեսությունը**, որը չեն ըն-
դունել Հայ, ռուս և եվրոպացի լեզվաբանները այն պատճառաբանու-
թյամբ, թե կառուցված է հսկելիության բաղաձայնական համակարգին
պատմական պայմանների միակողմանի պատկերացման և Հայ բարբառ-
ների առանձնահատկությունների սխալ հաշվառման հենքի վրա:

Ձևաբանական դասակարգման մեջ սիստեմատիկական մոտեցումները
կարևոր դեր են խաղացել հատկապես բարբառային առանձնահատկու-
թյունների բացահայտումների և նոր միավորների նկարագրության հա-
մար: Այս մեթոդով էլ Ա. Ղարիբյանը 1953 թ. տարբերում է Հայ բար-
բառների 3 խումբ և 7 ճյուղ: Հստակության և անցյալի անկասարկ կնի-
մով խանակի Հայ բարբառները ներկայացնում են **գերբարբառային**,
մեծնիստային և **գրաբարբառային խմբեր**, ընդ որում՝ գերբարբառային խմբին են
պատկանում 3 ճյուղ՝ ա, Ե, Բ, մասնիկավորին՝ 3՝ կր, կա, հա, գրաբա-
րակերպ խմբին՝ 1 ճյուղ (առանձնացվում են նաև՝ միջճյուղային բարբառ-
ներ - Թիֆլիսի և Արեշ-Հալաբիկի):

Ա. Ղարիբյան լեզվաբան-բարբառագետի ջանքերով Հայտնաբերվել ու
գիտականորեն նկարագրվել են 15 հայերեն բարբառներ, որից 6 են-
թախմբեր առաջարկվել են ճանաչել որպես ինքնուրույն բարբառներ: Իր
հետազոտած Հարուստ փաստերով գիտական աշխարհին ներկայացրել է
Հայ բարբառների մի քանի ինքնուրույն ճյուղեր, հնչյունական դասակար-
գումով փորձել է վերանայել ձևաբանական դասակարգման սկզբունքնե-
րը:

Լեզվաբանը «Հայ բարբառագիտություն» (1953) մենագրության
«Հայ բարբառային համեմատական հնչյունաբանություն» ծավալուն են-
թաբաժնում բնութագրել է Հայ բարբառներում առկա բոլոր հնչյունները
և, հետևելով Աճառյանի առաջադրած սկզբունքներին, գիտական ստու-
գարություններ նշել դրանց ընդգրկված բարբառախոս վայրերը: Համեմա-
տության ելք ընդունելով դարաբարի (նաև՝ աշխարհաբարի) հնչյունները՝
բնութագրելով ձայնավորները, երկբարբառները, բաղաձայնները: Անշուշտ
գրանք գերազանցապես քաղված են Հայոց լեզվի պատմությունը նվիրված
հեղինակների աշխատություններին, բայց կան նաև նոր լրացումներ ու
փաստեր, որոնք բերված են իր իսկ Հայտնաբերած բարբառներից:

Հ. Աճառյանը Հայ բարբառների դասակարգման համար ընտրել է
ձևաբանական սկզբունքը՝ միառժամանակ նկատելով, որ սրայթական
բարբառների հնչման եղանակի և կամ՝ հ-Ֆ փոփոխության հիման վրա

ընդհանրական դասակարգումները կարող են խախտել «տե», «կը», «էք»
ճյուղերի բարբառների ու մնացած ենթամիավորումների չափանիշները,
օրինակ է բերում՝ Նոր Նախիջևանի բարբառի և նրա կազմում գտնվող
Չալդիրի հնչյունական անհայտ տարբերությունները, իսկ հ-թ տարբե-
րակիչ հատկանիշի հաշվառմամբ՝ «Մշո բարբառը, որ Բուլանջիսի և Ա-
լաշկերտի հետ մի ամբողջություն է կազմում, պիտի բաժանվի երկուսի
Բուլանջիսի պիտի մեծ Վանի, Խոյի, Սալմաստի, Ուլմիայի և Մարաղա-
յի բարբառների, իսկ Մուշ և Ալաշկերտ պիտի միանան Խարբերդի, Եր-
վնդի, Պողսի, Երևանի ևն բարբառների հետ»:

Հասկանալի է, որ մեր նպատակը չէ ընտրության առնել ձևաբանական
սկզբունքը՝ ցույց տալով նրա առավելություններն ու թերությունները, այլ
այն, որ Հ. Աճառյանը նկատել է, որ դասակարգման հիմք կարող է ծա-
ռայել հ-թ հնչյունական հակադրություն ունեցող բարբառները, որ կարե-
լի է կիրառել միջբարբառային հապտյն տարբերությունների, այդպես էլ
նույն ճյուղի ներսում ենթախմբերի հնչյունական փոփոխությունների տա-
րածական շարժագծերի որոշարկման համար:

Մեր սույն հոդվածում կփորձենք համառոտ գծերով ներկայացնել Ա.
Ղարիբյանի հ-ի դիմաց ոչ առանձնական թ-ի առկայության պատմա-
հնչյունաբանական մի կարևոր մեկնությունը, որը, չգիտես ինչու, անուշադ-
րվել է մասնալեզվ հետադարձ ուսումնասիրողների կողմից:

Ա. Ղարիբյանը գրում է. «Հ» բաղաձայնը կա համարյա բոլոր բար-
բառներում, բացի Վանի բարբառից, որտեղ եթե կա էլ նապա այն սովոր-
ական «ճ» ունեցող բառերում չէ, այլ ստացվում է ուրիշ բաղաձայննե-
րի փոփոխությունից (թ)», - գրում է Ա. Ղարիբյանը և ապա շարունա-
կում. - Վանի, Ուլմիայի, Խոյի, Մարաղայի, Դիադինի բարբառներում,
Մշո բարբառի հյուսիս-արևելյան հատվածում, Բայազետի ենթաբարբա-
րում և Նոր Զուղայի քաղաքի խոսվածքում «ճ» բաղաձայնի դիմաց ար-
տասանվում է հետնալեզվային շիական «խ» բաղաձայնը: Օրինակ՝ Հաց
> խաց, Հեղ > խեղ, Հող > խող, Հարս > խորս և այլն:

«Հ» բաղաձայնը թ-ի վերածելու մեջ հետևողական է Վանի բարբառը:
Մյուս բարբառները որոշ դեպքերում չեղումներ են կատարում:

Հ-ի դիմաց թ-ի առկայություն ունեցող տարածական միավորները
բերված են ինչպես Հ. Աճառյանի, այնպես էլ այլ հեղինակների նկարագ-
րով ու փաստարկումներով, որոնք կրկին ստուգվել են Ղարիբյանի կող-
մից:

Այս հասկանիչը ավելի հետևողական դասակարգել է հատկապես Վանի
բարբառը, որովհետև այն չունի հ: Այս երևույթը, ըստ Ղարիբյանի, ավել-
ի հին է՝ «Մենք արդեն հայտնել ենք այն կարծիքը, որ այդ երևույթը Վա-
նի բարբառը ժառանգություն է և ստացել խաղաղական լեզվից, որն ըստ

երևույթին չի ունեցել «Հ» բաղաձայն, ինչպես աթմ Վանի բարբառը», - պրոմ է նա:

Գ. Զահուկյանը, այդ երևույթը դիտել է իբրև V դարի Հայ բարբառների Հնչյունական կարևոր Հատկանիշ և դետեղել զուգաբանությունների ցանկում՝ բառակցի Գ-ի դիմաց ոչ ստեմնանական խ (Հ-խ), այնուհետև բերել Հետևյալ օրինակները՝ «Մնծաճիծոր» (~ Մնծաթիծոր), Հէր (~ Խէր), Հորդել (~ Խորդել), Հայակել (~ Խոցակել), ճաճիճ (~ ճաթիճ)»: Գ. Զահուկյանը կարծիքով «Բառակցի Գ-ի դիմաց խ-ի առկայությունը, անշուշտ, ենթադրատային, թերևս, ինչպես կարծում են, ուրարտական տղեցության արդյունք է, մանավանդ որ այդ երևույթը տարածված է Հասկապետ Վասպուրականում և Պարսկահայքում»:

Հարցը սրմամբ իհարկե, չի ավարտվում:

Բանն այն է, որ 1982-ին Հ. Մուրադյանը իր «Հայոց լեզվի պատմական քերականություն» (Հ. Մ աշխատության մեջ ըննարկման առարկա է դարձրել ինչպես Գ-ի փոփոխությունը, այնպես էլ Հ. Սևուրյանի «Քննություն Վանի բարբառի» ուսումնասիրության մեջ տեղ գտած բարբառային մի շարք երևույթների փոփոխության՝ պատմական ժամանակաշրջանների որոշարկումները՝ չընդունելով Ղարիբյանի և Զահուկյանի Գ-ի դիմաց խ-ի առկայությունը ուրարտական շերտից պահպանված վիճելու կարծիքը: Այդ առիթով Հ. Մուրադյանը նշում է Հետևյալը. «Այս վարկածը, ինչպես տեսնում ենք, խարսխված է սոսկ այն դիտողության վրա, որ նշված երևույթը Հասուկ է ուրարտերեն լեզվին, և որ նույն օրինաչափություններն ունեցող Հայ բարբառների դեպքերում տարածքը Հիմնականում Համընկնում է Ուրարտական պետության և նրա Հարակից շրջանների Հետ: Կարծում ենք, որ այդքանը բավարար Հիմք չի կարող ծառայել նման մի ծանրակշիռ եզրակացության Համար»:

Հ. Մուրադյանի բերած փաստերը և դրանցից բխող մեկնությունները, ցավոք, ոչ թե Հաստատում են իր նոր վարկածը, այլ Հավաստում այն փաստը, որ դրաբարին զուգահեռ եղել է բարբառային մի վիճակ, երբ մինչև X-XII դարերը Գ-ի դիմաց խ փոփոխությունը դեռևս կենսունակ եղել է ընդգրկելով մի Հսկա տարածադասի Վանի, Ուզմի, Մոկսի, Հասուխի, Ուրմիայի, Մարաղայի, Թավրիզի, Սալմաստի, Խոյի, Մակրի, Բայապետի, Դիադինի, Մանաղիերսի, ինչպես նաև Արճեշի, Արծկեի, Խլաթի, Բաղեշի գավառներն ու Հարակից բնակավայրերը: Այլեկին, այդ երևույթը սուկա է ոչ միայն բառակցի, այլև մուսցած բոլոր դիրքերում:

Հ-ի դիմաց խ չկա, չի եղել և այդպես էլ պահպանվել է մինչ օրս:

Այս փոփոխությունը, ըստ մեր դրանցումների տարածվել է ինչպես կրոնական, այնպես էլ փոխառյալ մի շարք բառերում:

Հ. Մուրադյանը թեև բերում է բազմաթիվ փաստեր՝ ստացույցելու Հա-

մար, որ Հ > Խ փոփոխությունը Հասկապետ-ծուրում չունի, այնուամենայնիվ նրա վերլուծությունը, ի զսովման Հենց իրեն, Հավաստում է, որ Հայ բարբառներում Հնչյունական Հ և Խ Համակարգերը դալիս են վաղնջական ժամանակներից, ուրեմն սխալ է նաև այն ենթադրությունը, որ «Հ > Խ» Հնչյունափոխության պրոթուություն մոտավոր ժամանակը կարելի է դիտել VI-VII դարերի սահմանադրում», ինչպես որ դրան Հանգել է Հ. Մուրադյանը:

Կարծում ենք նաև, որ ճիշտ չէ Հ > Խ կոչել Հնչյունափոխություն, որովհետև պատմական դարաշրջանն ընթացքում Վասպուրականում և Պարսկահայքում արդարև փոփոխություն տեղի չի ունեցել, այլ պարզապես Հիշյալ տարածքների ենթաբարբառային միջակը չի ունեցել Հ կոկոբային, Հնչային Հնչյունը:

Հ-ի դիմաց ստեմնանական խ-ի առկայության զուգաբանությունը ավելի ճիշտ է արտացոլում Հնչյունական այս երևույթի ինքնուրույնությունը, պատմականությունը և իրական միջակը: Ինքնին Հասկանալի է, որ պատմականորեն դրանք զուգահեռաբար Հանդես են եկել և ունեցել են իրենց տարածվածության սահմանները, կայուն և փոփոխական շրջափային ուղղությունները:

Եվ անկախ այն Հանգամանքից, թե ձևաբանական դասակարգումով այս կամ այն բարբառային միավորը պատկանում է «ամ», «կր», «ա» ճյուղերին, այնուամենայնիվ, ունեցել է Հնչյունական երկու ընդհանուր խմբավորում Հ // Խ Համակարգեր:

Այդ ներկայացնենք Խ Համակարգի բարձրանների բուն կենսությունի Վանի մար և նրանից դուրսացած նույն Համակարգի ալիքային տարածման կանոնավոր շարժապետը, որոնք ունեն Հիմնական և մերձակից գոտիներ:

Դրանք մոտավորապես ընդգրկում են սույլ ուղղությունները.

- 1) Վան → Մոկս → Ուզմ → Հասուխ.
- 2) Վան → Ուրմիա → Սալմաստ → Թավրիզ.
- 3) Վան → Խոյ → Զուղա (Նոր-Զոսլա).
- 4) Վան → Խլաթ → Արճեշ → Արծկե → Բաղեշ.
- 5) Խոյ → Սալմաստ → Մարաղա.
- 6) Բաղեշ → Մանաղիերս → Բաղալես (Կոբայիս):

Ինչպես ցույց են տալիս շարժապետային այս ուղղությունները, Հաճախ կենսությունի (կայուն գիծ սույլ) պրոթուություն են կատարել այն բնակավայրերը, որոնք Գ-ի դիմաց խ ամրակայել են ուղղակի բեկումով և աստիճանաբար փոխանցել Հաջորդ միավորին, մինչև այն Հասել է

մարման գիծը, այսինքն Հ-ի գիմաց Հ:

Նշված շարժապետից 4-ի կենտրոնը Վանն է, 5-րդը՝ Խոյը, 6-րդը՝ Բաղեշը, այսինքն Վանի բարբառն ըստ էության միջնորդաբար է մասնակցել Բաղեշի, Մանազկերտի, Բազավանի տարածական միավորներին Հ> թ փոփոխումներ:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Բաղեշի, Մանազկերտի, Բազավանի, Բայազետի բարբառային միավորները, որոնցում բարբառային այս երևույթը նկատելիորեն հեռացել է Վանի բարբառից, դարբարյան Հ-ի դեմաց Հ (սակ պո), Հ > խ (խ):

Հ. Աճառյանը Վանի բարբառում նկատել է, որ «Բառասկզբի Հ-ն դառնում է միշտ խ, ինչ. հա «այո» > խա, Հիսմու. > խիսմու, Հին > խին և այլն...

Հ> խ-ի ձայնափոխության մի դարմանային օրինակ է հայ բառը: Ոչ միայն հայ դառնում է խա, այլև նրա որոշյալ խառն ձևը դառնալով ըստ օրինի խեն, ստացել է «մարդ» ընդհանուր իմաստը:

Մեծ լեզվաբանը միաժամանակ գրանցել է Հ> խ փոփոխության 38 օրինակ, ընդ որում խ-ի առկայությանը ա ձայնավորը քմայնանում է դառնալով ա:

Բազավանի, Բազավանի խոսվածքում խ և խ ունեն հնչյունային արժեք ստեղծելով իմաստային հակադրություններ: Դրա ապացույցն են հետևյալ նվազագույն դրույթները.

- | | | |
|-------------------|---|--------------------------|
| հազ > խազ «հաղար» | - | խ ազ «խաղել, գիծ բաշել» |
| հայ > խայ | - | խ ալ «մի՛ թե, հավանաբար» |
| հայր > խեր | - | խ եր, խ եր «օգուտ» |
| խաչ > խաճ | - | խ աճ «հաչոց» |
| հալ > խալ | - | խ ալ «ղալ, աղլամաղ» |

Հ // թ համակարգերի բարբառներում դեպի հակադրություններ կան ոչ միայն հնչյունակալմամբ, այլև քերականական մակարդակով: Այսպես ուղղականաձև մի շարք բառեր, դրաբարից սուանց փոփոխության, նույնությամբ տեղ են գտել Հ. համակարգի, իսկ հարցականաձև ուղղականները՝ թ համակարգի բարբառներում: Դրանք ավելի հստակորեն արտացոլված են Բազավանի երկու հիմնական խոսվածքներում.

Գրություն	Բան Արաբիերտի խոսվածք	Բազավանի խոսվածք
աւետիք	աւլեդիկ	աւլետիս, աւլեդիս
բաղնիք	բաղնիկ	բաղնիս
բանալի	բաղնիկ	բաղնիս
երգիկ	Հ երգիկ	Հ երգիս

ընթերց	-----	ընթերիս
հարսանիք	հարսնիկ	խարսնիս, խաունիս
տանիք	տանիկ	տալին

Այս փոփոխությունները ենթադրում են նաև որոշակի օրինաչափություններ, օրինակ բարբառային այն միավորներում, որտեղ կա Լ՝ ք և Լ՝ ք ձևերը, այնտեղ Հ> թ փոփոխությունը լիակատար չէ, իսկ եթե մի որևէ խոսվածքում կամ բարբառում արձանագրվում է պա՛ռքա, պա՛ռքա, Հե՛ռքա, խա՛ռքա, ա՛ռքա ձևերը, ապա այդ միավորները անպայման պատկանում են թ համակարգության բարբառների թվին:

Խ համակարգ ունեցող բարբառներն ընդհանրապես խլակազմ են, եթե նկատի չունենանք Բաղեշի, Բազավանի, Բայազետի տարբերակները: Բառասկզբի դիրքում ձայնեղ պայթյունների և կիսաշփականների դիմաց նրանք ունեն խոլ լծուղաշարժ՝ ա, կ, ա, ծ, ճ: Սա պարտադիր առկա է գրեթե բոլոր շարժապետային ուղղություններում: Հաս Մ. Մուրադյանի Մոկսի բարբառի ձայնեղ պայթյուններն ու պայթյունականները՝ պահպանվում են ռնգայիններից հետո (թեև կան նաև գ՛ քմայնացման դեպքեր): Պ, կ, ա, ծ, ճ միավորներն ընդհանրապես մնում են անփոփոխ, բացի ռնգայինից հետո ընկած դիրքից, որի դեպքում ձայնեղանում են, որոշ բառերում, բառասկզբի դիրքում ա, կ, ա՛ ն ունեն շնչեղացման միտում: Կայուն են միայն շնչեղ խոլերը:

Շալալային ընդգրկմամբ գերակշռում է ձայնեղների խզացման օրինաչափությունը, այսինքն. խոլերի պահպանումը: Չայնորդների շարքում կա ւ-ը: Չայնորդները նույնությամբ պահպանվում են, միայն բառասկզբի ւ-ի դիմաց Հ, իսկ ւ-ն ք (երբեմն նաև ո > ու) միավորից առաջ: Խլակազմությունը նկատելիորեն թուլացնում ու խախտում է հնչյունների ներքին ձայնաժաղկային հավասարակշռությունը, որի պատճառով էլ համեմատաբար մեծ թիվ են կազմում ենթահնչյունային միավորները:

Մ. Մուրադյանը Մոկսի բարբառի համար դրանք տեղաբաշխել է հետևյալ կերպ. «Մոկսի տարածքում գործածական են 63 հնչյուն՝ 13 ձայնավոր (11-ը՝ սովորական, 2-ը՝ երկար), 17 երկբարբառ, 3 եռաբարբառ, 35 բաղաձայն (7 ձայնորդ, 12 պայթյուն, 8 կիսաշփական, 9 չփական)»:

Սա Մոկսի բարբառի նոր ու համակողմանի ընտելության մասնակի միճակագրություն է, որտեղ ներկայացված են հնչյունային և ենթահնչյունային հարավոր բոլոր միավորները՝ իրենց կայուն և անցողիկ դեբիտը:

Հարկ է նշել նաև, որ, չնայած Մոկսի բարբառի հնչյունային այս բաղաձայնությունը, այնուամենայնիվ բաղաձայնական համակարգում կա պակասավորություն՝ ձայնեղ բաղաձայնները կամ չկան, կամ էլ հանդիս են

գալիս ունգայիններից Հետո միայն: Այս երևույթը դիտվում է իբրև վաղն-
ջական ժամանակներից եկող էական տարբերություն: Իսկ < > և փոփո-
խությունը Գ. Զառուկյանի նշած 120 բարբառախոս վայրերից 16-ն
ունի կարյն, 3-ը՝ թուլացող կամ երկակի տարբերակներ:

Այսպիսով, և Համակարգի բարբառների Հնչունաբանության Համե-
մատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 1) Հայ բարբառներում < > և
զուգահեռականությունը պատմականորեն Հին է և ամրակարգված է Վաս-
սուրյանում ու Պարսկահայքում՝ ընդգրկելով նաև Հարակից մի շարք
շրջաններ ու բնակավայրեր, 2) խղիղազմությունը փափ վանկում ստեղ-
ծում է ձայնավորների նկատելի թուլացում (քմայնացում), բաղաձայնների
ստորաձայնեղացման և առնամանական երևույթներ, 3) «Վանի բարբառը
առանձնապես աչքի է ընկնում «ո» և «ե» երկբարբառային ձայնավորնե-
րով, ի տարբերություն մյուս բարբառների: Արգալիսի ձայնավորները ունե-
ցել է նաև գրաբարը: Մեր կարծիքով - գրում է Ա. Ղարիբյանը, - այս
ձայնավորները Վանի բարբառը ժառանգած պետք է լինի իր նախորդ
բիանական լեզվից...», 4) «Հ» Հնչունի փոխարեն Վանի բարբառն ու-
նի «փ», մի Հասկություն, որն ունեն Վանի բարբառն և նրա մոտիկ գան-
վող բարբառները. մի Հասկություն ևս, մեր կարծիքով Վանի բարբառը
ժառանգած պիտի լինի բիանական լեզվից»:

Իհարկե, վերջին երկու կարծիքները թեև կտրուկ, բայց ինչ-որ չափով
ընդունելի են, որովհետև դրանք Հավաստված են պատմաաշխարհագրա-
կան ու լեզվական փաստերով:

Հայտնի է նաև, որ Աղձնայց աշխարհի (նաև՝ Կորճայքի) բարբառա-
յին վիճակը գրաբարի Համեմատությամբ ունեցել է դեպի տարբերու-
թյուններ, նույնիսկ այն աստիճան, որ X դարի պատմիչ Թովմա Արծրու-
նու վկայությամբ, առանց թարգմանչի միջնորդության, անհասկանալի էր
մնում վասպուրականիներին և Ոստանիկ գավառների բնակիչներին:

Ավելին Վառձապուհ թագավորին տեղեկացրել էին, որ Աղձնիքում
Դանիել Ասորու մոտ կան Հայոց Հին գրեր: Հանձնարարում են պալատա-
կան Վահրիճին, որը բերում է արդ. գրերը: Մեսրոպ Մաշտոցը դրանք
շուրջ Հինգ տարի փորձարկում է, սակայն պարզվում է, որ դրանք պակա-
սավոր են և լիովին չեն արտացոլում գրաբարի 36 Հնչույթները: Դանիե-
լյան գրերը 22-ն են: Դրանք Հալանաբար գործածական են եղել Աղձ-
նայց աշխարհում արտացոլելով որոշ բարբառներ: Այս ենթադրության
Համար կարևոր են Հասկապես այն փաստարկները, որ սոլյալ տարածքի
խոսվածքները, գրաբարի Համեմատությամբ, չունեն բ, դ, փ, ձ, ց պայթյա-
լիական ձայնեղ բաղաձայնները, < > կոկորդային-շնչային, ֆ խուլ կիսաշփա-
կան Հնչունները, արգպես էլ Հին ասորերեն և այլ լեզուների նման ձայնա-
վորները չեն ունեցել Համասարտասիան գրանշանները, ուրեմն գրաբարի

36 Հնչունների Համեմատությամբ Գանիելյան գրերը չի ունեցել 14 Հն-
չուն:

Սա, թերևս, և Համակարգի Հնչունակազմի ամենահին վկայություննե-
րից է և ուշադրության արժանի:

РЕЗЮМЕ

С. М. Саакян

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ФОНОЛОГИЧЕСКОЙ КЛАССИФИКАЦИИ АРМЯНСКИХ ДИАЛЕКТОВ АКАДЕМИКА А. ГАРИБЯНА

В статье по-новому осмысливается предложенный А. Гарибяном принцип классификации армянских диалектов, также известный как классификация, отражающая изменения звонких и глухих взрывных согласных и полуаффрикатов.

Особое внимание уделяется изменению С - Л, рассматриваемое А. Гарибяном как важная характеристика армянских диалектов. Данный принцип был также принят акад. Г. Джаукяном и нашел свое применение в таблице выделенных им статистических изоглосс.

Выделение автором статьи диалектов опирается на разграничении систем (в данном случае не учитываются традиционные морфологические классификации). Предпринимается попытка локализовать диалекты системы "Л" (Васпуракан и Парикаау́к), представить их стабильные и исчезающие характерные черты, а также установить, что армянская письменность до Месропа Маштоца, вероятно, была создана на основе субдиалектной системы "Л".

1803 - 2004

115 - 2005

